ՆՈՐ-ԴԱՐ

№ 161 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի 25 Սեպտեմբերի 1885 Չորեքշաբթի 25 Սեպտեմբերի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 161

Տարեկան 10 բուբլի վեց ամիսը՝ 6 բուբլի երեք ամիսը՝ 3 բ. 50 կ. Հասար 5 կոպեկ։
Համարեա գրված են Թիֆլիսում ժամկոյն խմբագրատանը։

Խմբագրատիրան Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի ուշ օրերից) ժամի 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն ժամից առաջ։ Յայտարարութիւնների բաժին 2 կ., բնկալանքի համար՝ կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ.—Չինենախիջևան։
Քաղաքական.—Լուրեր։
Հեռագրեր։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան վոհ-նախագահն խնդրում է յայտնել, որ սեպտեմբերի 29-ին Ելիսաւետապօլում և 4-ին Հոկտեմբերի Կիւրդամիրում երկրագործական գործիքների հրապարակական փորձը կը լինին։

Փորձի ենթարկուին հետևեալ գործիքները՝—աբօրներ՝ Ռանսոմի, Սիմսի և Չեֆերիսի, զանազան Թուեր (նոմերները) Ի. Ի. Գենի (Առվերմանի) զանազան Թուեր. Յակոբ Գենի, Անգլո-բելգիական արօրը Հովարդի, խոր ակոս վորող արօրը, Լիլլօսլի, ամերիկական արօրը Լիլլդալի «Արծիւ» կոչուածը, հնդկական և եգիպտական արօրները, բելգիական արօրը Ֆրենչլի, Ելիսաւետօպօլի չոլերը, տեղական Ելիսաւետօպօլի արօրը, կօլօնիաների արօրը, Գենկէ արօրը Ալէքսանդրոպօլում չինած, լծելու սարքը Գրօսուլեօպօլսկինը.—մէկ ձիով կալսող մեքենան Կլէյտոնի և Շուալվօրդի, Տիկսոնին, քամու տուղ մեքենան Բարուելի, Կազբէկի և Սամոյլովիչի, Լէպսլի և Վիլմանի և խաղող քամելու մեքենան Բելլինօ-Ֆինգրվինի։ Ով որ ցանկանում է մասնակցել յիշեալ փորձերին՝ պէտք է իւր գործիքները չանձնէ Թիֆլիսի երկաթուղու կայարանը մինչև 25 սեպտեմբերը։

Անդրկովկասեան երկաթուղու վարչութեան հետ կայացած պայմանի դրութեամբ՝ վերը յիշուած բոլոր գործիքները ձրի կուղարկուին Թիֆլիսից մինչև Ելիսաւետօպօլ և Քիւրդամիր և ձրի էլ յետ կը դարձուին։

Իսկ ընկերութեան անդամները, որոնք կը ցանկան փորձի տեղը գնալ, հետևեալ դիմողութիւնն ունին. վճարելով մի անգամ Թիֆլիսից մինչև Ելիսաւետօպօլ, կամ հակառակը, սովորական գինը ամբողջապէս՝ նրանք կարող են վերադառնալ Երիւանը, ստանալով ձրի տոմսակները Ելիսաւետօպօլի և Քիւրդամիրի կայարանների կառավարիչներից, ներկայացնելով միայն ընկերութեան անդամակցութիւնը վաւերացնող առանձին վկայական, որը առաջուց կարելի է ստանալ ընկերութիւնից և որը պէտք է ներկայացնել տոմսակ գնելու ժամանակ՝ վերան նշան գնելու համար։

Երկրագործական գործիքների փորձերի վերաբերութեամբ աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալ ցանկացողները կարող են գիմել Կովկասի Գիւղատնտեսական ընկերութեան գրասենեակը ամեն օր, 10 ժամից մինչև 12-ը։

—

„Кавказъ“ լրագրի ասելով Բագու քաղաքում ասիկանալիի աշխատութեամբ բացուելու է գիշերելու ապաստան, ուր այժմ 40 հոգու համար։

—

Ռուսիայում Հոգևորի ազատութեան քսանհինգամեակի յիշատակին, ինչպէս Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, կը ձուլուին ծիծաղներ (գրամի ձևով մի բան), որի մէկ երեսի վրայ նկարած կը լինի ազօթող ռուս գիւղացին և նրա շուրջը գրուած է.—„Այս կը յիշենք գիւղացիների Ազատող—Թագաւորին». միւս երեսի վրայ գրուած կը լինի. „Հոգևորի ազատութեան քսանհինգամեակի յիշատակին, 19 փետրվարի, 1886 Թ.“։

Ծիծաղները կը ձուլուին զանազան մեծութիւններով, ինչպէս արծաթից, նոյնպէս և ուրիշ մետաղներից։

—

„Новое Время“ լրագրի ասելով կառավարչական շրջաններում մտադրութիւն կայ վերջնականապէս լսափանել կապալները և զօրքերի պաշարի հոգացողութիւնը փոխանակ մասնաւոր անձինքների, այսուհետև կը յանձնուին զօրքերի հրամանատարներին։

—

Նիւսիայում Հոգևորի ազատութեան քսանհինգամեակի յիշատակին, ինչպէս Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, կը ձուլուին ծիծաղներ (գրամի ձևով մի բան), որի մէկ երեսի վրայ նկարած կը լինի ազօթող ռուս գիւղացին և նրա շուրջը գրուած է.—„Այս կը յիշենք գիւղացիների Ազատող—Թագաւորին». միւս երեսի վրայ գրուած կը լինի. „Հոգևորի ազատութեան քսանհինգամեակի յիշատակին, 19 փետրվարի, 1886 Թ.“։

Ծիծաղները կը ձուլուին զանազան մեծութիւններով, ինչպէս արծաթից, նոյնպէս և ուրիշ մետաղներից։

—

„Новое Время“ լրագրի ասելով կառավարչական շրջաններում մտադրութիւն կայ վերջնականապէս լսափանել կապալները և զօրքերի պաշարի հոգացողութիւնը փոխանակ մասնաւոր անձինքների, այսուհետև կը յանձնուին զօրքերի հրամանատարներին։

—

Նեղքին գործերի մինիստրութեան մէջ „Русскій Курьеръ“ լրագրի ասելով, ներկայումս մի նախագիծ է մշակվում գաստիարակական տներում օրինաւոր և ապօրինի ծնուած մանուկներին պատասխանատու ընդունելութեան մասին։ Մինչև այժմ այդ տներում ընդունվում էին միայն ապօրինի ծնուած մանուկները, իսկ օրինաւոր ծնուածները մեծ դժուարութիւններ էին ենթարկվում, որովհետև դրանցից պահանջում էին շատ տեսակ վկայութիւններ։

—

Պոստային և հեռագրական գլխաւոր վարչութիւնը „Нов. Вр.“ ասելութեամբ, պատրաստութիւն է տեսնում առաջիկայ տարում Թոյլատրելու տեղական և կենդրոնական պոստային (կանտորներում և բաժանմունքներում) հաստատութիւններին ընդունելու բաժանորդագրութիւն կայսերութեան մէջ գոյութիւն ունեցող կամ ապագայում հրատարակուելիք լրագրերի և պարբերական հրատարակութիւնների համար, ինչպէս որ այդ այժմ գոյութիւն ունի մայրաքաղաքներում արտասահմանում հրատարակուող թերթերի վերաբերութեամբ։ Այդպիսի կարգը ներմուծուելուց յետոյ պոստային հրատարակութիւնները պատասխանատու կը լինին յոյս տեսնող հրատարակութիւնների Հիշտ տեղը հասցնելուն և որոշ հասցէն յանձնելուն։ Իսկ Թղթակցութեան հետ հաշիւները կը տեսնեն բաժանորդագրութիւնը ընդունող հաստատութիւնները։

—

Մեզ խնդրում են հրատարակելու հետևեալը.—Առաջարկում ենք Թիֆլիսում եղող բոլոր դերասաններին և այդ արհեստով պարապել ցանկացող պարոններին, որ եթէ միտք ունին այս ձմեռս չարունակել հայերէն ներկայացումները Թիֆլիսում, բարեհաճեն գալ և միանալ մեզ հետ, կամ մենք նրանց հետ։ Մենք պատրաստ ենք ընդունել ամեն տեսակ պայման, եթէ իհարկէ մեզ պակաս չեն գասել իրանցից արժանաւորութեան մէջ. որովհետև մեր միտքը ոչ թէ միայն փողն է, այլ որպէս զի յաջող ներկայացումներով կարողանանք գրաւել ժողովրդի համակրութիւնը ու սէրը, որպէս զի առանձին առանձին Թատրոնասէրների մասնակցութեամբ անյաջող ու անպատրաստ ներկայացումներով չը սառեցնենք Թատրոն յաճախողներին. իսկ եթէ մեր այս առաջարկութիւնը ընդունող չեղաւ՝ մենք էլ հարկադրուած կը լինինք մի ներկայացում տալուց յետ, հեռանալ Թիֆլիսից։ Պ. Տէր Դաւթեանի հետ արդէն միացել ենք, ուստի ցանկացողները Թող չտապեն տեսնել մեզ և խորհրդակցել, որովհետև այս կիւրակի կամենում ենք առաջին ներկայացումը տալ „Քամուն բերածը քամին կը տանի“ պիէսան հեղ. պ. Պարունէքգեանի, որը մեծ ընդունելութիւն է գտել Թիֆլիսում և խնդրողները շատ կան ներկայացնելու համար, կամ մի ուրիշ պիէսա, ինչ կը վճռէ բազմութեան ձայնը. 200-ից աւելի պիէսներ ունինք։

Մեծապատիւ խմբագիր, խնդրելով կը խնդրենք որ եթէ կարելի կը համարէք, տեղատորել Ձեր պատուական լրագրի առաջիկայ համարներից մէկում, որով ընդ միշտ կը պարտաւորացնէք մեզ։

Դիւրասնուհի Ալմա և Սաֆրազեանց։

—

Սեպտ. 24-ին խմբագրութիւնս ստացաւ մի նամակ Նուխուց, բայց նամակը չը բացած և առանց խմանալ կարողանալու նամակագրի անուն և ազգանունը, ստիպուած էինք վերադարձնելու պօստային վարչութեան, որովհետև մեզանից այդ նամակի համար պահանջում էին 14 կոպ. (կրկնակի) վճար։ Շատ անգամ այդ կրկնակի վճարը հատուցել ենք և նամակ գրողներին այդ մասին ոչինչ չենք յայտնած, բայց այժմ հարկադրուած խնդրում ենք, որ խմբագրութիւնս ուղարկած նամակներին հարկաւոր վճարը մարկալով հատուցանեն, որպէս զի նամակները չը մնան պօստատանը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՉԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ, 16 սեպտ.— Չին-Նախիջևան քաղաքը բաղկանում է 1200 գերդաստանից, որից 800 տունն պարսիկ ազգաբնակութիւնից է, և 400 տունն հայ լուսաւորչական պատանութիւնից և իւր գեղեցիկ դիրքով ընկած է բոլորակ հորիզոնական գաշտի մակերևոյթի մէջ տեղն, շրջապատուած այգիներով և ծառատունկերով, քաղաքի տներն կամ հում աղիւսից է շինուած կամ ցեխով պարսկական Ճաշակով, բացառութեամբ՝ մի քանի տներից, որոնք շինուած են նոր ձևով, և նրանք պատկանում են Թէ կալուածատէր պարսիկ ազաներին և Թէ հարուստ անձինքներին, իշխողները ծուռ ու նեղ աղով և ամեն տեսակ կեղտոտութեամբ լցուած, այն է սեխի, ձմերուկի կեղևներով և խաղողի չանչերով և այլն, մանաւանդ պարսից Թաղը, որ հնաց չը կայ անցնելու, անցորդը ստիպ է քիթն բռնած լինի արտաչնչող գարշահոտութիւնից, կարծես Թէ հէնց այդ ազգի համար կեղտոտութիւնը և անմաքրութիւնը յատուկ սեփականութիւն է, որ մինչև անգամ ուղղ էլ չեն դարձնում իրենց շրջապատող հակառողջական իրերի վերայ, բացի Մոլսխական լուացումից, որ ամեն մի իսլամական անձն Ճշտիւ կատարում է նը նամազի ժամանակ այդ մահմեդական օրէնքով սրբագործուած ծէսը. իրև մի սրբազան պարտաւորութիւն, պարսիկները օրքան ջերմեռանդ են իրենց նամազը կատարելու, այնքան էլ ծոյլ են դէպի իրենց աշօթատեղին պայծառացնելու և զարդարելու, բացի չորս պատերից, ոչինչ աչքի չի ընկնիլ նրանց աղօթատեղում—մէջիդում. Տեղւոյս բարեպաշտոն հայ ժողովուրդը զգալով նորակառոյց ս. Գէորգ եկեղեցւոյ խաչկալի կարօտութիւնը, չը նայելով, որ այդ դիտաւորութիւնը ամբողջ տասնեակ տարիներ էր, որ արծարծվում էր ժողովրդական շրջանում, բայց այս տարի կարգադրութեամբ և վերահսկողութեամբ տեղւոյս փոխանորդի կազմուեցաւ ստորագրութիւն և հանգանակութիւն 700 բուբլուոյ չափ նուէրներ ժողովելուց յետոյ, պայման կապեցին մի վարպետի հետ, որպէս զի Խաչկալն չինէ 700 բուբլով և ոսկեայ Թիթեղով ծածկէ, որը արդէն սկսուած է և չուտով կատարուի, այս հանգանակութիւնը բաւականին օգնեց նոյն ինքն փոխանորդն իւր սակաւաքանակ ռոճկից, ժամանակին նուիրատուների ցուցակը կուղարկենք խմբագրութեանդ տպելու, և յորդորելու միւս մեր հայրենակիցներին դէպի այսպիսի մի Աստուածահաճոյ գործ։ Ըզ մոռանանք յիշելու և այն, որ տեղւոյս փոխանորդ բարձրապատիւ Յովսէփ վարդապետի սրտեռանդ աշխատութեամբ՝ բացուեցաւ այս տեղ Կովկասեան հայոց բարեգործական ընկերութեան մի Ճիւղ։ Ընթերցարան բացուելու համար էլ Թոյլատուութիւն խնդրած է նա ընկերութեան կորհրդից. անհամբեր սպասում ենք իրագործուելուն։ Այն անձն որ անկողմնապահ է եթէ մի հարևանցի հայեացք ձգէ այս տեղի հայ ժողովրդի վերայ՝ կը տեսնէ արդարև մի համեստ և քրիստոնէավայել յատկութիւն և ձգտումն դէպի ամեն մի բարի և Աստուածահաճոյ գործերի և հիմնարկութիւնների, բայց ինչ արած, որ չունին այն արժանաւոր եկեղեցւոյ հովիւները, որոնք իրենց հեղինակութեամբը օրինակ գառնային այս փոքրաթիւ ժողովուրդը ձուլելու ի մի սէրտ և ի մի հոգի, և քրիստոնէական Ճշմարիտ վարդապետութեամբ առաջնորդէին դէպի ամեն մի բարի ձեռնարկութիւններ։ Տարակոյս չը կայ, որ այդ տունը ժողովուրդը սըրտի ուրախութեամբ կը կատարէ, բայց տարաբաղտարար դրանք բարի օրինակ չեն տալիս ժողովրդին։ Այստեղ շատ անգամ պատահումեն բազմակնութիւն և ազգի ազգի ղեկծումներ ընդդէմ սուրբ նաւրբական եկեղեցւոյ վարդապետութեանը և կանոններին, որ բազմիցս տեսնվում է գեղջուկ ժողովրդի մէջ։ Այդ բազմակնութեան նըպատակ զգուելի և գերդաստանի մէջ խռովութիւն սերմանող և ապատանաբան, ուռ ամէն գիւղում 40 հոգու համար։

—

Ռուսիայում Հոգևորի ազատութեան քսանհինգամեակի յիշատակին, ինչպէս Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, կը ձուլուին ծիծաղներ (գրամի ձևով մի բան), որի մէկ երեսի վրայ նկարած կը լինի ազօթող ռուս գիւղացին և նրա շուրջը գրուած է.—„Այս կը յիշենք գիւղացիների Ազատող—Թագաւորին». միւս երեսի վրայ գրուած կը լինի. „Հոգևորի ազատութեան քսանհինգամեակի յիշատակին, 19 փետրվարի, 1886 Թ.“։

Ծիծաղները կը ձուլուին զանազան մեծութիւններով, ինչպէս արծաթից, նոյնպէս և ուրիշ մետաղներից։

—

„Новое Время“ լրագրի ասելով կառավարչական շրջաններում մտադրութիւն կայ վերջնականապէս լսափանել կապալները և զօրքերի պաշարի հոգացողութիւնը փոխանակ մասնաւոր անձինքների, այսուհետև կը յանձնուին զօրքերի հրամանատարներին։

—

Նեղքին գործերի մինիստրութեան մէջ „Русскій Курьеръ“ լրագրի ասելով, ներկայումս մի նախագիծ է մշակվում գաստիարակական տներում օրինաւոր և ապօրինի ծնուած մանուկներին պատասխանատու ընդունելութեան մասին։ Մինչև այժմ այդ տներում ընդունվում էին միայն ապօրինի ծնուած մանուկները, իսկ օրինաւոր ծնուածները մեծ դժուարութիւններ էին ենթարկվում, որովհետև դրանցից պահանջում էին շատ տեսակ վկայութիւններ։

—

Պոստային և հեռագրական գլխաւոր վարչութիւնը „Нов. Вр.“ ասելութեամբ, պատրաստութիւն է տեսնում առաջիկայ տարում Թոյլատրելու տեղական և կենդրոնական պոստային (կանտորներում և բաժանմունքներում) հաստատութիւններին ընդունելու բաժանորդագրութիւն կայսերութեան մէջ գոյութիւն ունեցող կամ ապագայում հրատարակուելիք լրագրերի և պարբերական հրատարակութիւնների համար, ինչպէս որ այդ այժմ գոյութիւն ունի մայրաքաղաքներում արտասահմանում հրատարակուող թերթերի վերաբերութեամբ։ Այդպիսի կարգը ներմուծուելուց յետոյ պոստային հրատարակութիւնները պատասխանատու կը լինին յոյս տեսնող հրատարակութիւնների Հիշտ տեղը հասցնելուն և որոշ հասցէն յանձնելուն։ Իսկ Թղթակցութեան հետ հաշիւները կը տեսնեն բաժանորդագրութիւնը ընդունող հաստատութիւնները։

—

Մեզ խնդրում են հրատարակելու հետևեալը.—Առաջարկում ենք Թիֆլիսում եղող բոլոր դերասաններին և այդ արհեստով պարապել ցանկացող պարոններին, որ եթէ միտք ունին այս ձմեռս չարունակել հայերէն ներկայացումները Թիֆլիսում, բարեհաճեն գալ և միանալ մեզ հետ, կամ մենք նրանց հետ։ Մենք պատրաստ ենք ընդունել ամեն տեսակ պայման, եթէ իհարկէ մեզ պակաս չեն գասել իրանցից արժանաւորութեան մէջ. որովհետև մեր միտքը ոչ թէ միայն փողն է, այլ որպէս զի յաջող ներկայացումներով կարողանանք գրաւել ժողովրդի համակրութիւնը ու սէրը, որպէս զի առանձին առանձին Թատրոնասէրների մասնակցութեամբ անյաջող ու անպատրաստ ներկայացումներով չը սառեցնենք Թատրոն յաճախողներին. իսկ եթէ մեր այս առաջարկութիւնը ընդունող չեղաւ՝ մենք էլ հարկադրուած կը լինինք մի ներկայացում տալուց յետ, հեռանալ Թիֆլիսից։ Պ. Տէր Դաւթեանի հետ արդէն միացել ենք, ուստի ցանկացողները Թող չտապեն տեսնել մեզ և խորհրդակցել, որովհետև այս կիւրակի կամենում ենք առաջին ներկայացումը տալ „Քամուն բերածը քամին կը տանի“ պիէսան հեղ. պ. Պարունէքգեանի, որը մեծ ընդունելութիւն է գտել Թիֆլիսում և խնդրողները շատ կան ներկայացնելու համար, կամ մի ուրիշ պիէսա, ինչ կը վճռէ բազմութեան ձայնը. 200-ից աւելի պիէսներ ունինք։

Մեծապատիւ խմբագիր, խնդրելով կը խնդրենք որ եթէ կարելի կը համարէք, տեղատորել Ձեր պատուական լրագրի առաջիկայ համարներից մէկում, որով ընդ միշտ կը պարտաւորացնէք մեզ։

Դիւրասնուհի Ալմա և Սաֆրազեանց։

—

Սեպտ. 24-ին խմբագրութիւնս ստացաւ մի նամակ Նուխուց, բայց նամակը չը բացած և առանց խմանալ կարողանալու նամակագրի անուն և ազգանունը, ստիպուած էինք վերադարձնելու պօստային վարչութեան, որովհետև մեզանից այդ նամակի համար պահանջում էին 14 կոպ. (կրկնակի) վճար։ Շատ անգամ այդ կրկնակի վճարը հատուցել ենք և նամակ գրողներին այդ մասին ոչինչ չենք յայտնած, բայց այժմ հարկադրուած խնդրում ենք, որ խմբագրութիւնս ուղարկած նամակներին հարկաւոր վճարը մարկալով հատուցանեն, որպէս զի նամակները չը մնան պօստատանը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՉԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ, 16 սեպտ.— Չին-Նախիջևան քաղաքը բաղկանում է 1200 գերդաստանից, որից 800 տունն պարսիկ ազգաբնակութիւնից է, և 400 տունն հայ լուսաւորչական պատանութիւնից և իւր գեղեցիկ դիրքով ընկած է բոլորակ հորիզոնական գաշտի մակերևոյթի մէջ տեղն, շրջապատուած այգիներով և ծառատունկերով, քաղաքի տներն կամ հում աղիւսից է շինուած կամ ցեխով պարսկական Ճաշակով, բացառութեամբ՝ մի քանի տներից, որոնք շինուած են նոր ձևով, և նրանք պատկանում են Թէ կալուածատէր պարսիկ ազաներին և Թէ հարուստ անձինքներին, իշխողները ծուռ ու նեղ աղով և ամեն տեսակ կեղտոտութեամբ լցուած, այն է սեխի, ձմերուկի կեղևներով և խաղողի չանչերով և այլն, մանաւանդ պարսից

Թաղը, որ հնաց չը կայ անցնելու, անցորդը ստիպ է քիթն բռնած լինի արտաչնչող գարշահոտութիւնից, կարծես Թէ հէնց այդ ազգի համար կեղտոտութիւնը և անմաքրութիւնը յատուկ սեփականութիւն է, որ մինչև անգամ ուղղ էլ չեն դարձնում իրենց շրջապատող հակառողջական իրերի վերայ, բացի Մոլսխական լուացումից, որ ամեն մի իսլամական անձն Ճշտիւ կատարում է նը նամազի ժամանակ այդ մահմեդական օրէնքով սրբագործուած ծէսը. իրև մի սրբազան պարտաւորութիւն, պարսիկները օրքան ջերմեռանդ են իրենց նամազը կատարելու, այնքան էլ ծոյլ են դէպի իրենց աշօթատեղին պայծառացնելու և զարդարելու, բացի չորս պատերից, ոչինչ աչքի չի ընկնիլ նրանց աղօթատեղում—մէջիդում. Տեղւոյս բարեպաշտոն հայ ժողովուրդը զգալով նորակառոյց ս. Գէորգ եկեղեցւոյ խաչկալի կարօտութիւնը, չը նայելով, որ այդ դիտաւորութիւնը ամբողջ տասնեակ տարիներ էր, որ արծարծվում էր ժողովրդական շրջանում, բայց այս տարի կարգադրութեամբ և վերահսկողութեամբ տեղւոյս փոխանորդի կազմուեցաւ ստորագրութիւն և հանգանակութիւն 700 բուբլուոյ չափ նուէրներ ժողովելուց յետոյ, պայման կապեցին մի վարպետի հետ, որպէս զի Խաչկալն չինէ 700 բուբլով և ոսկեայ Թիթեղով ծածկէ, որը արդէն սկսուած է և չուտով կատարուի, այս հանգանակութիւնը բաւականին օգնեց նոյն ինքն փոխանորդն իւր սակաւաքանակ ռոճկից, ժամանակին նուիրատուների ցուցակը կուղարկենք խմբագրութեանդ տպելու, և յորդորելու միւս մեր հայրենակիցներին դէպի այսպիսի մի Աստուածահաճոյ գործ։ Ըզ մոռանանք յիշելու և այն, որ տեղւոյս փոխանորդ բարձրապատիւ Յովսէփ վարդապետի սրտեռանդ աշխատութեամբ՝ բացուեցաւ այս տեղ Կովկասեան հայոց բարեգործական ընկերութեան մի Ճիւղ։ Ընթերցարան բացուելու համար էլ Թոյլատուութիւն խնդրած է նա ընկերութեան կորհրդից. անհամբեր սպասում ենք իրագործուելուն։ Այն անձն որ անկողմնապահ է եթէ մի հարևանցի հայեացք ձգէ այս տեղի հայ ժողովրդի վերայ՝ կը տեսնէ արդարև մի համեստ և քրիստոնէավայել յատկութիւն և ձգտումն դէպի ամեն մի բարի և Աստուածահաճոյ գործերի և հիմնարկութիւնների, բայց ինչ արած, որ չունին այն արժանաւոր եկեղեցւոյ հովիւները, որոնք իրենց հեղինակութեամբը օրինակ գառնային այս փոքրաթիւ ժողովուրդը ձուլելու ի մի սէրտ և ի մի հոգի, և քրիստոնէական Ճշմարիտ վարդապետութեամբ առաջնորդէին դէպի ամեն մի բարի ձեռնարկութիւններ։ Տարակոյս չը կայ, որ այդ տունը ժողովուրդը սըրտի ուրախութեամբ կը կատարէ, բայց տարաբաղտարար դրանք բարի օրինակ չեն տալիս ժողովրդին։ Այստեղ շատ անգամ պատահումեն բազմակնութիւն և ազգի ազգի ղեկծումներ ընդդէմ սուրբ նաւրբական եկեղեցւոյ վարդապետութեանը և կանոններին, որ բազմիցս տեսնվում է գեղջուկ ժողովրդի մէջ։ Այդ բազմակնութեան նըպատակ զգուելի և գերդաստանի մէջ խռովութիւն սերմանող և ապատանաբան, ուռ ամէն գիւղում

ՔԱՂԱՔԱԿԱՆ

„Новости“ լրագրի Թղթակիցը Սոֆիայից հաղորդում է բոլգարական յեղափոխութեան առաջին օրը յոյս տեսած յայտարարագրի բովանդակութիւնը։

„Հայրենակիցներ. Ձեզ ենք դիմում այժմ և խնդրում ենք ամեն կերպ օգնել կատարուած իրողութեան։ Ռումելիայի կառավարութիւնը այդչէն վայր է ձգած, միութիւնը հրատարակած և ժամանակաւոր կառավարութիւնը ձեզանից է օգնութիւն սպասում։ Մեր սպառնական պահանջը արդէն մասամբ կատարուած է և մենք այժմանէ նրան պիտի ցոյց տանք մեզ։ Մենք պիտի գլխովին պինդ ենք և պաշտպանենք մեր գործը։ Պէտք չէ ոչ մէկին խորհրդին լսել։ Ժողովուեցէք ամեն քաղաքում, ամեն գիւղում, ամեն Թաղում և այլն, ժողովները (միտինգ) կրպմեցէք, համակրութիւն արտայայտեցէք գործին, որովհետև գործը—բոլգարական է։ Պահանջեցէք մեր կառավարութիւնից, որպէս զի նա գործը ուղղակի պառնալ ասիական հրոսակներից հայրենիքը պաշտպանելու։ Այս րոպէն չը պիտի կորցնել։ Պատրաստուեցէք ամենքդ, որ զէնքը ձեռքին պաշտպանենք մեր միութիւնը և անկախութիւնը, հակառակ դիպուածում յետնորդ սերունդը մեզ կը դատապարտէ։ Ապացուցենք, որ մենք ազատութեան արժանի մի ժողովուրդ ենք։ Ռումելիայի մեր եղբայրները մեզանից են օգնութիւն սպասում։ Դուրս եկէք Բոլգարիայի պատիւը պաշտպանելու։ Հայրենասիրութիւնը այժմ պիտի խօսի իւրաքանչիւր բոլգարացու սրտում։ Այս րոպէիս Բալկանեան և անդր-բալկանեան Բոլգարները պիտի մոռանան ամեն փառասիրութիւն, խորհրդաւոր մի վայրկեան է և այս մեծամեծ գործին պահանջում։ Կամ միացեալ Ռումելիա ու Բոլգարիա, կամ Բոլգարիան և Ռումելիան պիտի միշտ և մոնթը դառնան, բոլոր բոլգարների ոսկորները աւերակների տակ թաղելով։ Կամ միացեալ Բոլգարիան և Ռումելիան, կամ գերեզմանատուն։

«Իշխանը. Պեղնից ենք այժմ սպասում, որ գու հրամայիր քո զօրքերին ռումելական սահմանները գալու։ Դու պէտք է ցոյց տաս այժմ, որ գու մեր ընդհանուր հայրենիքի արժանի տէրն

ֆան Բոլգարիայի պատիւն ու ապագան քեզանից է կախուած։

Դ. Պհակով (պատգամաւոր և „Անկախութիւն“ լրագրի խմբագիր)։

Միևնոյն օրը Մակեդոնացիները հեռատարակեցին հետևեալ յայտարարագիրը. «Այս րոպէիս այլ ևս չկայ Արևելեան Ռումիլիա. ժողովուրդն ու զորքը դեռ առաւօտեան զուրս ձգեցին նրան աշխարհագրական քարտէզից և հրատարակեցին նրա միութիւնը բոլգարական իշխանութեան հետ. Միացեալ բոլգարիայի անժողովուրդը մանում է իւր կեանքի ամենամեծ րոպէին։ Այժմ միջոց ունի նա իւր ոյժն ու իրաւունքը ցոյց տալու։ Թրակիայի, Մեսիայի և նահատակ Մակեդոնիայի որդիքը մի սրտով հն ապրում և իրենց սեպհական ձեռքն են առնում իրենց վիճակը։ Անցեալն և պատմութիւնը սովորցրին նրանց որ կայծը Բերլինի վեհաժողովից չմնած սրտերի մէջ չը հանգաւ։ Ո՛վ կարող է ասել, որ այս րոպէն կը սահմանափակուի միմիայն Արևելեան Ռումիլիայով, և չի վարի բազմայարկար Մակեդոնիայի մեր բոլոր տառապեալ եղբայրներին։ Հայրենակիցներ. Ռումիլիայի մեր եղբայրների անատանելի վիճակը, նահատակ Մակեդոնիայի մեր եղբայրների ծանր վիրաւորքը, միացեալ Բոլգարիայի ապագան մեզ ի զէն են կոչում։ Մակեդոնացիներ. Ոտք, քաջեր, պատերազմիցիք Շիպկայի վերայ. Ոտք զոհելիք մեզ Բոլգարիայի ազատութեան համար։ Ոտք գիտէք, որ այժմեան բոլգարական ազատութիւնը գնուած է քաջ ռուսների և Թրակիայի որդւոց արիւնով։ Այժմեան վայրկեանը պահանջում է նոր զոհեր Ռումիլիայի և Մակեդոնիայի համար։ Հայրենակիցներ-մակեդոնացիներ. գնանք Ռումիլիա, պատուենք նրա կապը Թիւրքիայից։ Իմացած եղէք, որ իշխանութեան հետ Ռումիլիայի միանալովը ճանապարհ է բացվում Մակեդոնիայի ազատութեան համար։

—

Սեպտեմբերի 10-ից Կ.-Պօլսից հաղորդում են „Հաւասի գործակալութեան“ հետևեալը.—„Այստեղ իմացան Ռումելիայի անցքերի մասին միայն սեպտեմբերի 7-ին, և ստացած տեղեկութիւնները չատ անորոշ էին։ Սուլթանը և Դուռը իմացան անցքերի բոլոր բովանդակութեան մասին միայն „Հաւասի գործակալութեան“ հեռագրից, որ հաղորդում էր Բոլգարիայի և արևելեան Ռումելիայի միութեան մասին։ Շաբաթ գիշերը նրանք ստացան դեսպանութեան միջոցաւ այս նորութեան հաստատութիւնը, որ նրանց սաստիկ զարմացրեց։ Կիւրակի օրից մինիստրներից և գեներալներից բաղկացած արտաքոյ կարգի խորհուրդը շարունակվում է գրեթէ անընդհատ. սեպտեմբերի 9-ին դեռ ևս ոչինչ վճիռ չէր կայացած, եթէ վճիռ չը համարենք այն հրամանը, որով բաւական թուով զօրքեր պիտի հաւաքուին Ադրիանապօլում, Մակեդոնիայում և Ալբանիայում։ Սուլթանը իւր անձնապաշտպանութեան զգացմունքից զբաղուած, վախենում է անզօրք թողնել Կ. Պօլսում։ Խորհրդում կարծիքները բաժանուեցան։ Մինիստրական ճգնաժամը անխուսափելի է։

9 սեպտեմբերի, իշխան Ալէքսանդրը գալով Գիլիպալօղլ խոյին հեռագրեց սուլթանին, որ ժողովրդի ցանկութեան համաձայն նա ճանաչեց Բոլգարիայի և Արևելեան Ռումելիայի միութիւնը և ստանձնեց Ռումելիայի իշխանութիւնը։ Իշխանը հեռագրում աւելացնում է, որ այս միութիւնը կատարուեց առանց որ և է Թշնամական դիտաւորութեան սուլթանի դէմ և խնդրում է սուլթանից, որ նա բարեհաճէը զինադադարի պայման չարժուելի դէմ, ունի լայն պատմական նշանակութիւն։ Ով կարողացել է Սայիդ փաշային ճանաչել նրա 2½ տարուայ կացութեան միջոցին Բերլինում, նա կը հասկանայ, թէ որ այս քարէը յուսաւորուած քաղաքական գործողը վերին աստիճանի մարդասէր հայացքներով, եռանդուն ու քանքարաւոր մարդը հենց մի այնպիսի մարդու տիպ է ներկայացնում, որ ընդունակ է ըմբռնել Բալկանեան թերակղզու իրերի վերջին ծայրի խառնաշփոթ վիճակը։ Սայիդ փաշայի կացութեան ժամանակ Բերլինում իրեն ներկայացուցիչ Թրքական կառավարութեան, այս վերջինս ձեռնամուխ եղաւ մի շարք բարերար բարենորոգումների, որոնք կարճ միջոցում նշանաւոր կերպով բարձրացրին օսմանեան կայսերութեան վիճակը։ Սայիդ փաշայի խորհրդով, գերմանական սպաները և պաշտօնատարները հրաժարեցան Կ.-Պօլիս, որտեղ նրանք ցոյց տուեցին իրենց օգտակարութիւնը։ Սրանով Սայիդ փաշան իւր կառավարութեան մեծ ծառայութիւն արաւ։ Կ.-Պօլսում տեղի ունեցած մինիստրական փոփոխութիւնը պատերազմական մինիստրի հրաժարականով է բացատրվում։ Մեզ հասած տեղեկութիւնները նայելով, պատերազմական կուսակցութիւնը մինիստրների խորհրդի նիստերին պարտութիւն կրեց։ Հրաժարականը Օսման փաշայի, որ պատերազմական կուսակցութեան գլխաւոր ներկայացուցիչ էր և նրա նշանակիլը արտաքին գործոց մինիստրի պաշտօնում ապացոյց է օսմանեան քաղաքականութեան խաղաղասէր ուղղութեան»։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

23 սեպտեմբերի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Այսօր նահանգական դատարանում սկսուեց Միրոնովիչի գործի քննութիւնը, որ մեղադրվում էր Սարրա Բեկկերի սպանութեան մէջ։ Մեղադրում է պրօկուրորի օգնական Բօբրիշչեվ Պուշկինը։ Պաշտպանում են Միրոնովիչին Անդրիեվսկին և Կօրօբչեվսկին։ Իրրև վկայներ կանչուած են Բեզակ և Սիմեօնով։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ. Ռուսաց արտաքին գործոց մինիստրը վաղը այստեղից գնում է Պետերբուրգ։ Այսօր բացուեցաւ դանիական պատգամաւորների ժողովի (րիկստագի) նիստերը։ Գահակողմեան անդամները բացման չէին եկել։ Ի պատիւ Թագաւորի բարձրաձայն «ուռա»ները ցնծութեամբ ընդունեցան ներկայ գտնուածներից։

ՆԻՇ. Ազգային ժողովը մատոյց Թագաւորին նրա գահական ճառին պատասխանական հասցէն, որի մէջ ասուած էր, որ ժողովրդական երեսփոխանութիւնը միաձայն ընդունեց կառավարական բոլոր օրինագիծերը, որպէս զի միջոց տրուի կառավարութեան վերականգնել նախկին դրութիւնը Բալկանեան Թերակղզու վերայ։ Հուսկ յետոյ յայտնուած է, որ ժողովուրդը անպայման հաւատում է իւր Թագաւորին։ Այսօր ազգային ժողովի նիստը փակուեցաւ։ Թագաւորը և պատերազմական մինիստրը մնում են Նիշում, իսկ մինիստրը—սրբազգիդենալը կը վերադառնայ Բելգրադ։

Կ.-ՊՕԼԻՍ. Երեկ կայացաւ օտար պետ. գեսպանների առաջին խորհուրդը։ Լսվում է, որ գեսպանները վճռել են մի մեմօրանդում կազմել, որը նախ քան նրան բոլգարական և Թրքական կառավարութիւններին պաշտօնապէս յանձնելը, կը ներկայացնուի սերութիւնների հաւանութեան։

23 սեպտեմբերի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Առաջիկայ հոկտեմբերի 1-ից առևտրական և արդիւնաբերական ձեռնարկութեանց վերայ աւելացած տուրքի պատճառով, մշակուած են կանոնները պահանջների ժամանակին չը հատուցանելու համար և հրամայած է արքունական պալատաններին կառավարուել սրանցով ներկայ տարուանից։

Երէկ առաւօտեան Օխտէն վառօդեայ գործարանում ճայթեց մի արհեստանոց, որտեղ սպանուած են երեք բանուորներ և վիրաւորուած մէկը։

ՓԱՐԻԶ. Պարլամենտական ընտրութիւնները ամեն տեղ կայացան կատարեալ կարգապահութեամբ։ Հետևանքները դեռ ևս անյայտ են։

24 Սեպտեմբերի.

ԽԱՐԿՈՎ. Երէկ երեկոյեան մեծ հրդեհ պատահեց Սուզդալեան հասարակական շարքում։ Այրուեցան յայտնի գործարանատէրերի 13 պահեստի տներ. շատ ապրանքներ ազատուած են. վնասը, սակայն, նշանաւոր է։

ՎԱՐՇԱՎԱ. Լեհական բանկի բաժանմունքի կառավարիչ Վլանգլովսկի-Կրժեչկովսկի փախաւ։ Բաժանմունքի մէջ պակասը 45,000-ի է հասնում։

ՓԱՐԻԶ. ընտրութիւնների հետևանքները առ այժմ բարեյաջող են պահպանողականների համար։ Յայտնի են արդէն ընտրութիւնների հետևանքները 81 նահանգների մէջ. ընտրուած են 162 պահպանողականներ և 141 հասարակապետականներ։ Նախկին ժողովի անդամների հետ համեմատելով, ամեն կարգի պահպանողականները 83 տեղ աշխատեցին և միայն 5-ը կորցրին։ Վերջնական հետևանքը յայտնի կը լինի երկրորդ քուէարկութեան միջոցին 202 տեղերի համար։ Հասարակապետականները յուզուած են պահպանողականների անսպասելի յաջողութեամբ։ Այս վերագրում են հասարակապետական կուսակցութեան ներքին պատահարներին։

Խմբագիր-Հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՕՖԷ ՄՕԿԿՕ

Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.

(Ц. 2392.) 48—32

ԳԵՐԶԱԿ ԳԵՐՄԱՆ

Իշխան Իվան Մուխրանսկու տանը, Գալովինսկիյ պրոսպեկտի վերայ, Կլասիկական գիմնազիոնի կողմից.

Ստանալով ամեռուայ «ՀԵՂՈՒ համար ԱՆԳԼԻԱԿԱՆ և ՖՐԱՆՍԻԱԿԱՆ գործարանների ապրանքներ, ընդունում եմ պատուէրներ քաղաքացիական և զինուորական հագուստների. նոյնպէս ընդունում եմ պատուէրներ գիմնազիստների և բոլոր ուսումնարանների աշակերտների ամեռուայ համազգեստները կարելու—ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ։

10—2

Սոլոլակի փողոցի վերայ, № 10

Եւրոպական լուացարան

ԴԷՅԿԱՐԽԱՆԵԱՆԻ

ՄԻԱԿ ԳՈՐԾԱՏՈՒՆԸ, ՈՐՏԵՂ ԼՈՒԱՆՈՒՄ ԵՆ վարագոյրներ (զանուես), որոնք լուանալուց յետոյ ոչնչով չեն զանազանվում նորերից։

7—2

Լոյս տեսան Ֆ. Շմիդթի

ԲԷՆԻԱՄԻՆ ՖՐԱՆԿԼԻՆ

Երկրորդ տիպ.։

(Գինն է 40 կոպ.)

—

ԳԷՈՐԳ ՎԱՇԻՆԳԹՕՆ

Երկրորդ տիպ.

(Գինն է 60 կոպ.)

Թարգ. գ.-մ. Փ. Վարդանեան.

Վաճառվում են կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում։

SIROP DE RAIFORT IODÉ

De CRIMAULT & C.°

Pharmaciens à Paris

AUTORISE EN RUSSIE

ՐԻՓՕՈ ԻՕԴԷԻ ՍԻՐՕՊ

Փարիզի Դեպօ և ընկ. Դեղավաճառաց

Այս դեղը գործածվում է քսան տարի է՝ ի վեր երախտաց հիւանդութեանց դէմ ձկան իւղի և անթիսքօռբութիւնի (противоцынготный) սիրոպի տեղ և նշանաւոր արդիւնքներ է տալիս։

Ծախվում է Փարիզ Վիվիէն փողոց № 8. Т

(ամ. 3) 9—7

Վլադիկաւկասեան պօստային ԴՆԱՑՔՆԵՐԻ ԸՐԹԻՒԿՈՒԹԻՒՆԸ «ԹԻՓԼԻՍ» ԿԱՑԱՐԱՆՈՒՄ.

Կառքեր, որոնք ձանապարհին զիշերելու կայարաններ ունին։

Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. Վլադիկաւկաս գալիս են երեկոյան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ.—43 րոպ. միջ

Վլադիկաւկասից դուրս են գնում առաւօտեան 9 ժամին։ Թիֆլիս գալիս են երեկոյան ժամի 4 և 44 րոպ. և ժ. 5—25 րոպ

Ե. Վ. ԿՈՎԱՉԻ.

Փիշերօթիկ և ցերեկուայ ուսումնարանը այժմ գտնվում է ՇԱՀՄՈՒՐԱԴԵԱՆԻ ՏԱՆԸ. Զավճավաձեան և Իրիբօեդեան փողոցների անկիւնում № 5։ Ուսումը սկսուած է սեպտեմբեր 2-ից։

10—7

Дозволено цензурою. Тифлисъ, 24-го Сентября 1885 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона, Гол. пр. д. № 12.